վանաւորութիւնն. Եզիդ ուղարկեց նորան Ռա-շիդի մօտ։

Երբ խաղաղացաւ երկիրը, ամիրապետը դրեց Մուսայ ի. Իսայ Հաշիմիին նորա վերայ կառավարիչ, որ մնաց այնտեղ մի տարի։ Կրկին Հայաստան իւր գաւառներով յուզեցաւ եւ ապստամբեցաւ։ Մուսայ տեղեկացրեց Ռաշիդին այս բանի մասին, որ ասաց. "Միայն Հարաշիին յարմար կ'համարեմ Հայաստանի համար". ապա նա հեռացրեց Մուսայ ի. Իսային եւ ուղարկեց Հարաշիին կառավարչի պաշտօնով, որ միայն այն ժամանակ վայր դրեց զէնքը, մինչեւ երկիրը միանգամայն խաղաղացաւ։

Ռաշիդ նշանակեց Ահմեդ ի. Եզիդ ի. Ուսայդ Սուլամիին կառավարիչ. երբ նա Հայաստան եկաւ, նորա դէմ ապստամբեցան երկրում ապրող խորասանցիք. որոնք Հարաշիի հետ եւ նորանից առաջ եկած էին. խմբուելով նորա դէմ նոքա սկսեցին նորա հետ կռուել, թէ՝ "քեզ ոչ լսել, ոչ հնազանդիլ կամինք„։ Այն ժամանակ Ռաշիդ նշանակեց Սայիդ ի. Սալմ ի. Քոտայբայ Բահիլիին. երբ նա Հայաստան եկաւ, զօրքը մի քանի ամիս նորան հնազանդեցաւ, ապա միացաւ իշխանների հետ։ Բաբ-էլ-աբւաբի բնակիչք ապստամբեցան նորա դէմ եւ յարձակեցան նորա օգնականի վերայ. Սայիդ ի. Սալմ սպանել էր նոցա իշխան Նաջմ ի. Հաշիմին, որի որդին՝ Հայուն ի. Նաջմ՝ յարձակուելով Սայիդի օգնականի վերայ Բաբ-էլ-աբւաբում եւ սպանելով նորան, ապստամբութեան դրօշ բարձրացրեց. ապա գրեց եղելութեան մասին Խազարաց թագաւոր խաքանին, որ եկաւ նորա մօտ ահագին զօրքով, յարձակեցաւ մուսլիմների վերայ, սպանեց եւ գերեց մեծ բազմութիւն. հասնելով Կուր գետի կամրջին, նա գերեց (այստեղ ապրող) մուսլիմներին, սպանել տուեց բոլորին, նաեւ կանանց եւ երեխաներին, եւ այրեց երկիրը։